ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2021թ. N ------ - Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 3-րդ մասով և 34-րդ հոդվածներով'

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի N16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N10-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1. Որոշման N2 հավելվածում «I Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն» գլխի 4-րդ տողի «առաջատար մասնագետ» բառերը փոխարինել «լրագրող» բառով, իսկ 7-րդ տողը ուժը կորցրած ճանաչել:

2. Որոշման N2 հավելվածում «I Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Արտաքին կապերի վարչություն» գլխի 2-րդ տողը ուժը կորցրած ճանաչել:

3. Սույն որոշմամբ նախատեսվող հաստիքի ամսական պաշտոնային դրույքաչափը սահմանվում է Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի

հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշմամբ նախատեսված ամսական պաշտոնային դրույքաչափերին համապատասխան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀԱՅԿ ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի /այսուհետև՝ Նախագիծ/ ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալով.

Վերջին ամիսներին կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների համաձայն Նախագծով առաջարկվում է կառուցվածքային փոփոխություններ կատարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի և աշխատակազմի արտաքին կապերի վարչություններում:

Աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությունն ի թիվս այլ գործառույթների՝ իրականացնում է նաև Երևանի քաղաքապետարանի ենթակայության ոլորտների, նաև վարչական շրջանների' տարեկան ծրագրերով նախատեսված աշխատանքների լուսաբանումը: Տեղեկատվական նյութերն ապահովվում են լրագրողների և տեխնիկական աշխատակիցների համագործակցության արդյունքում: Սակայն, աշխատանքային ծանրաբեռնվածությունը հավասարաչափ չի բաշխվում տարվա ամիսների միջև, արդյունքում տարվա մեջ մի քանի ամիս առաջանում է լրացուցիչ մեկ լրագրողի կարիք: Սակայն «Համայնքային ծառայության մասին» օրենքի դրույթները հնարավորություն չեն տալիս հաստիքը համալրել մի քանի ամսով:

Բացի այդ, «Համայնքային ծառայության մասին» օրենքի դրույթների համապատասխան մրցույթով շատ ավելի դժվար է համալրել հաստիքը Վարչության պահանջներին համապատասխան աշխատանքային ստաժի և փորձի, բարձր որակավորում և մասնագիտական ունակություններ ունեցող լրագրողով:

Աշխատանքային ծանրաբեռնվածությունը հավասարաչափ բաշխելու, իրականացվող գործառույթները համակարգված և մասնագիտացված իրականացնելու անհրաժեշտությունից ելնելով Նախագծով առաջարկվում է.

Աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության առաջատար մասնագետի հաստիքային միավորը փոխարինել տեխնիկական գործառույթներով աշխատակցի հաստիքով (լրագրող) և կրճատել Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքի համակարգող-թողարկիչ, թարգմանիչի հաստիքային միավորը, այն 2020թ. հունվարի 9-ից փաստացի թափուր լինելու և այդ գործառույթը մինչև օրս Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքի պատասխանատու քարտուղարի հաստիքային միավորը զբաղեցնող անձի կողմից լիարժեք իրականացնելու պատճառով:

Կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ նախագծով առաջարկվում է կառուցվածքի օպտիմալացման գործընթացի շրջանակներում կրճատել աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետի տեղակալի հաստիքը, քանի որ

վարչության կանոնադրական գործառույթները լիարժեք իրականացվում են վարչության արտաքին հարաբերությունների և արարողակարգի բաժինների միջոցով:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀԱՅԿ ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում ծախսերի փոփոխություն չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ